

67. ԽԵՐ ԷՂՆԻ

Աղքատ մարդըմ կէղնի, ուրեն լէ տղեմ՝ ու կնիկ մը։ Տղեն կմեծնա, կիտան վարժատուն, թե հինգ, թե յոթ տարի կկարդա, զուր կարդալ թաքմել էնելու վրա կէղնի։ Ավուրըմ մեկ կքնի, կըզարթի էրազըմ կտեսնա, կէլնի լուսուն քնուց, մամուն կասե.— Մամո՛, հ՝էսօր գիշեր էրազըմ իմ տեսի։

Մամն կասե.—Պատմե տեսնամ,—չֆամե ասե՝ խեր էղնի։

Ինադ կէնե, կասե.—Չը՛մ ասի։

Օր կասե՝ չըմ ասի, մամու հերս կէլնի, շարալախրմ, էրկու կզարկե տզի հ՝երես։ Կասե.—Դը՛, իմ տնեն դուրս հընկի։

Տղեն լալման կէրթա պապու խեշ։ Պապն օր կտեսնա զտղեն, կասե.—Լաո՛, հ՝որի՞ իս լացի։

Կասի.—Ըշթա էրազըմ ենք տեսի։ Հ՝էլա լուսուն քնուց, իմ մամուն ասի՝ մամո, էրազըմ իմ տեսի էդա գիշեր, ասեց՝ ասե տեսնամ։ Ես ասի՝ չըմ ասի։ Հերսոտավ, ծեծեց զիս, թալեց տնեն դուրս։

Պապն ասեց.—Լաո՛, մադամ օր քու մամուն չըս ասեր ի, ընծիկ ասա։

Պապ լէ չըֆքրավ, ասեր՝ խեր էղնի։

Տղեն ասեց.—Վալայի քզիկ լէ չըմ ասի։

Պապու հերս հ՝էլավ, շաբալախրմ էրկու լէ ինք զարկեց տզին։

Ասեց.—Դը՛, ջանըմի գնա իմ հ՝առջևեն։

Տղեն հոնկուց լէ լալման թորկեց էկավ վարժատուն։ Վարժապետ տեսավ, օր տղեն լացեր է, հարցուց, ասեց.—Տղա՛, հ՝որի՞ն իս լացե։

Ասեց.—Վարժապետ, քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ,

հ'էսօր գիշեր էրազըմ ենք տեսե, հ'էլա լուսուն իմ մամուն ասի՝ մամո՛, հ'էսօր գիշեր էրազըմ իմ տեսի, ասեց՝ պատմե տեսնամ։ Ես լէ ասի՝ չըմ ասի։ Օր ասի, Ճըլօթմ զարկեց իմ հ'երես, էրեց ղիս տնեն դուրս։ Էկա իմ պապու խեչ, տեսավ օր ես լալխըփվեր իմ, հարցուց ասեց՝ տղա, հ'որի՞ն իս լացի։ Ասի՝ հ'էսօր գիշեր էրազըմ իմ տեսի, հ'ելա իմ մամուն ասի։ Իմ մամ ասեց՝ ասա տէսնամ, ես չասի։ Հերսոտավ, չաբալախրմ էրկու զարկեց իմ հ'երես, էնեց ղիս տնեն դուրս։ Իմ պապն ասեց՝ քու մամուն չըս ասեր ի, էկո, ընծիկ ասա, ասի՝ քզիկ լէ չըմ ասի։ Չարալախրմ էրկու լէ էն զարկեց, ասեց, դը ջանըմի իմ հ'առջևեն գնա. թորկի, էկա վարժատուն։ Վարժապետ ասեց՝ մ'էնդոնց չըս ասեր ի, էկո ընծիկ ասե։ էն լէ չֆամավ ասեր՝ խեր էղնի։ Վարժապետ հերսոտավ, չաբալախրմ էրկուս լէ էն զարկեց, ասեց՝ գնա քու տեխ նստի։

Տղեն ինադ էրեց, պոչտկեց, հ'էլավ թորկեց վարժատնեն հ'ընկավ դուրս։ էկավ, էկավ քաղաքըմ հ'ելավ դուրս, մարդում՝ մեկ էկավ կընցներ, տեսավ։ Ասեց.—Տղա՛, դու ի՞նչ տղա իս, չըս հ'իգա տանիմ զքզիկ էնիմ ընծիկ տղա. քանի օր ավլատ ու թավլատ չունիս։

Տղենն ասեց.—Հ'որի չըմ հ'իգա։ Հ'էլավ հ'ընկավ մարդու հ'ետև, գնաց։

Թե հինգ, թե վեց տարի մնաց էդ մարդու մոտ։

Ավուրըմ մեկ Արևպտոց թագավոր, Արևելոց թագավորի վրեն ճամբեր էր թե. «Ցամ մարդրմ կճամբե հ'իգա ընծիկ, աշխըրքի հ'որթալախ ցուցու ու ասե հ'էրկինք քա՞նի աստղ կա, աստված ի՞նչ կէնե, յամ՝ կէլնիմ հ'իգամ ուր վրեն կռիվ»։

Թագավոր կանչեց զուր մեճլիսներ, ասեց.—Արևպտոց. թագավոր հրմլա ջուհապ է էրի ընծիկ՝ «Ցամ մարդրմ կճամբե հ'իգա ընծիկ աշխըրքի հ'որթալախ ցուցու ու ասե հ'երկինք քանի՞ աստղ կա, աստված ի՞նչ կէնե, յամ՝ կէլնիմ հ'իգամ ուր վրեն կռիվ»։

Մաճլիսներն է թալին բռնին, մեկ չկարցավ ճուհաբ իտեր, շիվարան մանցին։ Տղեն լսեց, պապուն ըսեց.—Աբո՛, գնա ասե թագավորին. էդտեխ օր կմնա տղեն Արևելոց թագավորի հողն է, ես կէրթամ զԱրևպտոց թագավորի ջուհապ կիտամ։

Պապն ասեց.—Լա՛ռ, քըզիկ ի՞նչ լախա կա, դու հ'ո՞ւր, էդա հրմլա բաներ հ'ուր, էդա խըդար գիտուն, հ'իմաստուն մարդ կա, ժողվեր ին էկան, մեկ չկարցավ էրթեր ջուհաբ իտեր, դո՞ւ պիտի էրթաս ջուհաբ իտաս։

Տղեն ասեց.—Աբո՛, դու ի՞նչ լախա ունիս, ժամկոչին ժամըմ պիտի, դու լէ գնա ասե։

Պապու ճար կտրավ, հ՚էլավ գնաց թամանա էղավ, կանավ թագավորի հ՚առեջ։

Թագավորն ասեց.—Խեր էղնի, հ՚որի՞ էկար։

Հալվորն ասեց.—Թագավոր ապրած, ընծիկ տղեմ՚ կա, կասե. «Գնա ասե թագավորին, ընծիկ էշըմ թըղ իտա, էրթամ Արևպտոց թագավորի շուհար իտամ ու դառնամ հ՚իգամ»։

Ասեց.—Գացեք կանչեք թըղ հ՚իգա։

Էկան առան զտղեն ու գացին։

Թագավորն ասեց.—Տղա, դո՞ւ իս ասի. թագավոր ընծիկ էշըմ թըղ իտա, էրթամ Արևպտոց թագավորին ջուհաբ իտամ հ՚իգամ։

Տղեն ասեց.—Հա՛։

Թագավորն ասեց.—Լա՛ո, էդա մեճլիս շահատ թրղ էղնի, օր էրթաս Արևպտոց թագավորի ջուհաբ իտաս ու դառնաս սալամաթ հ՚իգաս, զիմ ախչիկ կիտամ քզիկ։

Բերեց էշըմ տվեց տզին ու հեծավ գնաց։ Գնաց Արևպտոց թագավորի հող հ՚էլավ դուրս, հարցուց թագավորի քոշկ ու սարեն հ՚ո՞ւր է, ի՞նչ դին կընկնի։

Ցուցուցին, ասին՝ ֆլան դին կընկնի։ Քշեց իշով գնաց կանավ թագավորի քոշկի դուռ։

Թագավոր նստուկ էր փանջարեն. տեսավ, ասեց.—Էդ ի՞նչ տղա է։

Ասին.—Արևելոց թագավորն է ճամբի օր քու հարցումներուն պատասխան իտա։

Թագավոր ասեց.—Շատ աղեկ, օր իմ հարցումներուն էդ տղեն պատասխան իտա, զիմ ախչիկ կիտամ ուրեն։—Ասեց.—Տղա, աշխըրքի օրթեն հ՚ո՞ւր է։

Տղեն ասեց.—Իմ իշու օտներու տակն է, էդա տեխ օր իմ էշ կանուկ է։—Ինք դրռ հեծուկ է, վրը ուր իշուն։

— Շատ աղեկ, հ՚երկինք ի՞նչ խըտար աստղ կա։

Տղեն ասեց.—Ինչ խըտար մազ կա վրը իմ իշու պառեկին, էն խըտար աստղ կա հ՚երկինք։ Ջրս ավտրնա, հ՚իջի էկո համբրե։

Թագավորն ասեց.—Էդ լէ էղավ, մնաց մեկ հարցում, թե օր զէն լէ տվիր, կիտամ զիմ ախչիկ, առ ու գնա,—ասեց,—աստված հրմկա ի՞նչ կէնե հ՚երկնքի մեջ։

Տղեն ասեց.—Հ'իշի տրի հ'ոդա, հեծի զիմ էշ, ես լէ էլնիմ նստիմ վըր քու թախտին, օր ասիմ ինչ կէնե աստված հ'երկինք։

Թագավորն հ'իշավ էկավ, հ'էլավ հեծավ զէջ, տղեն հ'էլավ գնաց նստավ վըր թագավորի թախտին ու կիշքեր փանջարից դուրս։

Թագավորն ասեց.—Դը՛, ասե տեսնամ, աստված ի՞նչ կէնե հըմկա։

Տղեն ասեց.—Ի՞նչ կէնե։ Աստված զէն կէնե, օր զիս հանեց դրեց վըր քու թախտին, զքզիկ հ'իշուց հեսցուց իշու վրեն։

Թագավոր մտածեց։ Զգլուխ տարավ բերեց, ասեց.—Շատ օղորդ ասիր, ապրես։

Բերեց զուր ախչիկ տվեց տղին, հըլղրթեց, ասեց.—Դը, հ'էլի գնա քու հ'երկիր։

Էն վախտ օր տղեն գնաց կմեկտեխվեր, ախչիկն հարցուց, ասեց,—Տղա՛, գու ի՞նչ տղա իս։

Տղեն ասեց.—Ես ի՞նչ տղա պիտի էղնիմ, ընծիկ պապ ու մամըմ կեր։ Ես լէ վարժատուն կէրթենք կիգենք, ավուրըմ մեկ քնուկ ենք՝ էրաղրմ տեսա։

Օր ասեց էրաղրմ, տեսա, ախչիկն ասեց.—Խեր էղնի։

Տղեն ասեց.—էրաղրմ տեսա օր իմ մեկ դին արևն է, մեկ դին էլ լուսին։

Ախչիկն ըսեց.—Քու էրաղ բարին կատարվավ, մեկ դին օր լուսին էր, ես իմ, Արևպտոց թագավորն է, առար զէնդոր ախչիկ։ Մեկ դին օր արևն էր, Արևելոց թագավորի ախչիկն է, կէրթաս, կառնիս զԱրևելոց թագավորի ախչիկ, կէղնիս էնդոր փեսա։

Նոր էդ տեխ, իմալ օր մենք գլխեն թարիֆ էրինք, հըմալ մեկ-մեկ տղեն զուր գլխու գալած թարիֆ իրեց ախչկան։ Պառկան, քընան, հ'էլան լուսուն հ'ընկան ճամբախ, էկան։ Ջուհաբ գնաց թագավորին, թե չասիս՝ հալվորու տղեն տվեր է զԱրևպտոց թագավորի ջուհաբ, առեր է զախչիկն ու էկի։

Թագավոր էղավ աշխըրքով, հ'էլավ ուր մաճլիսներով գնաց հ'առեջ, բերեց հ'իշուց, զուր ախչիկ տվեց տղին։ Ցոթն օր գոլ ու զուռնեն զարկեց, ուրախութեն էրին։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք էլ հասեք ձըր մուրազին։

Աստծուց հ'իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։